ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-4

ք.Երևան

«29» «09» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, (այսուհետ «Գնորդ»), մի կողմից, և «ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Էդիկ Մուշեղյանի, (այսուհետ «Վաճառող») մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 01.02.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-4 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ մատակարար կազմակերպության՝ «ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ-ի, 24.09.2020թ. թիվ Ելք-2020/9-1 գրությունը, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարման ենթակա 1100 հատ «Սվիտեր» ապրանքատեսակից 145 հատի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ սահմանել մինչև 31.10.2020թ. :

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/4-4 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական :

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք. Չարենցավան, |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | 3 թաղամաս 17 շենք, 26 բն |
| Հ/Հ 900011175016 | «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02204739 | Հ/Հ 220433330242000 |
| | ՀՎՀՀ 02809532 |
| ՔԿ ծառայության | Տնօրեն՝ |
| Ա.Ղազարյան | Է.Մուշեղյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |